ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար **31/05/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 7
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Օնիկ Ախվերդյանը, Լիանա Գասպարյանը, Վալոդյա Գրիգորյանը, Նելլի Եսայանը, Ռուդիկ Զեյնալյանը, Էմմա Թորոսյանը, Մանուկ Ղազարյանը, Հովհաննես Մխիթարյանը, Հայկազ Սարգսյանը, Ավետիս Ֆարֆարյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության իրավերով նիստին մասնակցում էին՝

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը, իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը, մարզպետի խորհրդականներ՝ Դավիթ Թունանյանը, Սերյոժա Գրիգորյանը և Արման Խաչատրյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի փոխարինող՝ Լյուդվիգ Գյուլնազարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը

Նիստին մասնակցում էր Սիվիլ.ամ լրատվական կայքի լրագրող Լիլիթ Թադևոսյանը

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով և 65-րդ հոդվածով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Նիստը վարողն առաջարկեց խմբակցություններին ներկայացնել իրեն առաջադրված թեկնածուներին.

«ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ» կուսակցությունների դաշինք խմբակցության ղեկավար Դավիթ Մինասյանը նշեց, որ կուսակցությունը համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրում,

Փարաքար համայնքի ավագանու «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության ղեկավար Արաքսյա Վարդանյանը առաջադրեց Լյուդվիգ Գյուլնազարյանի թեկնածությունը:

Նիստը վարողը հանձնարարեց աշխատակազմին խմբակցություններին ներկայացնել քվեաթերթիկի նմուշը: Պատրաստվեցին թվով 11 քվեաթերթիկ, որը բաժանվեց ավագանու անդամներին, քվեարկությունից հետո քվեաթերթիկները տրվեցին նիստը վարողին, նա բարձրաձայն ընթերցեց յուրաքանչյուր ավագանու անունը և նշեց, որ քվեարկել են կողմ:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 5-8-րդ մասերի, 142.3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության 2024 թվականի մայիսի 27-ի թիվ 3170 և «ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ» կուսակցությունների դաշինք խմբակցության 2024 թվականի մայիսի 27-ի թիվ 3197 ՝ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությանը թեկնածու առաջադրելու մասին գրությունները, հիմք ընդունելով ավագանու անդամների բաց քվեարկության արդյունքները. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. 2024 թվականի մայիսի 31-ին անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 31-ի արտահերթ ընտրության արդյունքները՝ համաձայն որի Փարաքար համայնքի ղեկավար է ընտրվում «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության կողմից ներկայացված թեկնածու Լյուդվիգ Արիստակեսի Գյուլնազարյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի պահանջներով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի արտահերթ ընտրության արդյունքներով ընտրված ղեկավարի լիազորությունների ստանձնման օր սահմանել 2024 թվականի հունիսի 3-ին, ժամը 12:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Ավագանու անդամներ

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ _____